Հունիսի 10-ին նորընտիր Ազգային Ժողովի սեղրսական նիստին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գերծ. Տ. Գարեգին սրբազան. Ներսիսյանն ողջերծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը՝ ուղղված Ազգային Ժողովին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Հայրական ամենաքաղցր սիրով եւ գնահատանքով ողջունում ենք Ձեզ բոլորիդ, երբ այս պահին համախմբուել էք իբրեւ պետական նոր Խորհրդարանի անդամներ ստանձնելու համար օրինական եւ իրաւական պարտաւորութիւնները բարձրագոյն պատասխանատուութեան աստիճանի վրայ:

Վստահ եմ, որ Դուք զգում էք Ձեր երակների մէջ մեր ժողովրդի զաւակների երակների տրոփիւնը: Գիտակցում էք, թէ որքա՜ն լուրջ եւ ծանր պարտաւորութիւնների առաջ էք գտնուում, ձեր ականջները լսում են հայ աշխարհի նիւթեղէն եւ հոգեղէն աղբիւրների ձայնը:

Դուք Հայ ժողովրդի պատկերն էք մեր եւ օտար աշխարհի օրէնսդրական իշխանութիւնների առաջ: Ձեր որոշումներն են, որ պիտի օրինագծէն կառուցուածքը եւ վարէն դարաւոր այս երկրի կեանքի եւ զարգացման ընթացքը: Ազգային մեր արժանապատուութիւնը ձեզմով պիտի գտնի իր վաւերական արտայայտութիւնը: Պետութեան կառոյցի դպրոցը Ազգային Ժողովն է, որի հիմնական դասագիրքը Սահմանադրութիւնն է, ուսման մեթոդը նուիրաբերեալ անշահախնդիր աշխատանքն է, ազգային ինքնութեան եւ անկախութեան խոր հասկացողութիւնը, ժողովրդին ծառայելու անսակարկելի կամքը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին բնորոշուել է մեր Սահմանադրութեան մէջ որպէս Ազգային Եկեղեցի: Պատմութեան պարտադրանքն է այդ: Ուրանալ կամ թուլացնել այդ ինքնըմբռնումը, այդ ճշմարտութիւնը՝ կը նշանակի ուրանալ մեր պատմութեան ուղին եւ բովանդակութիւնը: Հայց. Առաքելական Ս. Եկեղեցու Մայր Աթոռը՝ Ս. Էջմիածինը, մնում է Ձեր մկրտարանը որպէս քրիստոնեայ ազգ:

Այս Հոգեւոր Տունը այն օջախն է, որտեղից առաքում ենք Ձեզ Մեր

օրհնութիւնները եւ Հայրապետական ողջոյնները. եւ շնորհաւորելով Ձեզ՝ ջերմօրէն աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած որ օրհնի Ձեր բոլորին եւ լիառատ յաջողութիւն շնորհի Ձեր աշխատանքներին:

Ողջ լերուք ի Տէր. զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն. եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

10 Յունիս 1999

Ս. Էջմիածին